Եւ ահա յանկարծ այս բոլորը վերացաւ, կարծես մի կախարդական գաւազանով: Ճապոնը տեղի տւեց հանգամանքների ուժի առաջ, աւելի զօրեղանալու եւ յաղթող հանդիսանալու համար: Նա լաւ էր հասկանում, որ մնում էր երկուսից մէկը – կամ վտանգի ենթարկելով Ճապոնի անկախութիւնը մնալ իր նախորդ առանձնութեան մէջ իր բոլոր առանձնայատկութիւններով, կամ օտարին չը հպատակւելու համար հիմնապէս փոխել իր ընթացքը եւ իւրացնել այն ամենը, ինչով ուժեղ էր այդ օտարը:

Եւ մի անգամ այդ ճամփի վրա ոտք դնելուց յետոյ, Ճապոնն էլ կանգ չառաւ ու նրա քայլերը եղան զարմանալի արագ ու կտրուկ: Այդ գործում խիստ մեծ դեր է կատարել արդի միկադօն՝ Մուտսու-Հիտօ, որ, ժողովրդի լաւագոյն տարրի վրա յենւած, միացրեց իր ձեռքում հոգեւոր ու աշխարհական իշխանութիւնները եւ մէկը միւսի ետեւից սկսեց իր բարեփոխութիւնները: Նրա առաջին գործը եղաւ թողնել Կիօտո, որտեղ նա իրան շղթայւած էր զգում դարաւոր ծէսերով, եւ իր մայրաքաղաքը հաստատեց Իեդօ (Տօկիօ), որ ծովի ափին լինելով շատ յարմարութիւն էր տալիս եւրոպացիների հետ անմիջական յարաբերութիւններ պահպանելու:

Երկրում այնքան մեծ էր շարժումը եւ նոր ճամփով գնալու պահանջը այնքան խիստ, որ դայմիօսներից շատերը հայրենասիրաբար հրաժարւում էին իրանց սեփական իշխանութիւնից եւ դարաւոր իրաւունքներից յօգուտ կայսեր: Դրանով սաստիկ հեշտանում է միկադօի գործը: Եւ կարճ ժամանակում վերջնականապէս ընկնում են ֆէօդալական կարգերն ու դասակարգերի առանձնաշնորհները: Այլ եւս դասակարգերի խտրութիւն չկայ, եւ բոլորը հաւասար են օրէնքի առաջ: